



*Մարզերում ագրոկենսաբազմազանության
պահպանման և օգտագործման լավագույն
փորձը*



Հայաստանը համարվում է տիպիկ լեռնային երկիր: Հայաստանում
լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ

բազմաֆունկցիոնալ համակարգ: Այս ամենը նպաստում է հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանում ձևավորված են 10 լանդշաֆտակլիմայական գոտիներ: Այս գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են կենդանական և բուսական տեսակների բնակության միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ կենսաբազմազանություն:

Հայաստանը գտնվում է տարածաշրջանի բուսական և կենդանական



աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում, ինչպես նաև հանդիսանում է միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ: Հայաստանն ունի ոչ այդքան մեծ տարածք (մոտ 30.000կմ²), բայց այստեղ աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 անողնաշար կենդանիներ:

Ըստ Հայաստանի լանդշաֆտային գոտիների՝ 2009-2013թթ. կենսաբազմազանության վիճակի փոփոխության հիմնական պատկերը հետևյալն է.

Կիսաանապատներ՝ հողային էրոզիայի և անապատացման երևույթներն ակտիվացել են, կիսաանապատային գոտու ընդլայնում է նկատվում լեռնային պրոֆիլում մոտ 50մ դեպի վեր:

Տափաստաններ և մարգագետնատափաստաններ՝ նկատվում է տափաստանային գոտու ստորին մասի կրճատում կիսաանապատների ընդլայնման հետևանքով, որի արդյունքում տափաստաններին բնորոշ տեսակները ներթափանցում են մարգագետնատափաստանային գոտի:

Չորասեր նոսրանտառներ՝ անտառի ստորին սահմանի նոսրացման հետևանքով նկատվում է այս էկոհամակարգի զբաղեցրած տարածքների ընդլայնում՝ նոսրանտառներին և շիբլյակին բնորոշ տեսակների, գլխավորապես՝ Ցաքի փշոտի (*Paliurus spina-christi*) և Դժնիկ քաղցրիի (*Rhamnus pallasii*) ներթափանցմամբ:

Անտառներ՝ մարդածին և բնական գործոնների ազդեցության արդյունքում անբավարար է անտառկազմող արժեքավոր տեսակների՝ կաղնու և հաճարենու բնական սերմային վերականգնումը: Խիստ կրճատվել են կովկասյան սոճու, հատապտղային կենու, արջատիլենու և այլ հազվագյուտ ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները, որոնց հաճախ փոխարինում են տափաստանամարգագետնային բուսական տիպերը:

Մերձալպյան և ալպյան մարգագետիններ՝ նկատվում են որոշակի սուկցեսիոն փոփոխություններ արոտավայրերի թերի ծանրաբեռնվածության հետևանքով, մերձալպյան տեսակները բարձրանում են ալպյան գոտի, իսկ ալպյան գորգերը աստիճանաբար փոխարինվում են հացազգիների գերակայությամբ ալպյան մարգագետիններով: Նկատվում է ամենուրեք ոչ կերային էքսպանսիվ բուսատեսակների տարածում, հատկապես՝ Եռակողասերմիկ անդրկովկասյանի (*Tripleurospermum transcaucasicum*):

Ջրաճահճային էկոհամակարգեր՝ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ գոտիներում առաջացած ծանծաղուտների շնորհիվ բարելավվել են մի շարք թռչնատեսակների կենսապայմանները և վերականգնվել են կերահանդակները:



Սևանա լճի էդեմիկ ձկնատեսակների պահպանման նպատակով լճում իրականացվել են ամառային իշխանի և գեղարքունի տեսակի արհեստական վերարտադրության գործընթացներ:

Հայաստանում վերջին հնգամյակում արձանագրվել են որոշակի հուսադրող դրական փոփոխություններ ֆաունայի ներկայացուցիչների

առավել խոցելի տեսակների վիճակի վերաբերյալ: Մի շարք տեսակների վիճակը կայուն է, օրինակ՝ արջի (*Ursus arctos*), գայլի (*Canis lupus*), չախկալի (*Canis aureus*), Կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*), հայկական մուֆլոնի (*Ovis orientalis gmelinii*), բեզուրյան այծի (*Capra aegargus*):

Ագրոկենսաբազմազանություն

Ագրոկենսաբազմազանությունը հիմքն է հանդիսանում կայուն գյուղատնտեսության: Կենսաբազմազանության, այդ թվում նաև ագրոկենսաբազմազանության կորստի պատճառ կարող է հանդիսանալ մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնական միջավայրի վրա:

Ագրոկենսաբազմազանությունն աշխարհագրական որոշակի



տարածքում գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի ու իրենց վայրի ազգակիցների, ինչպես նաև օգտակար վայրի տեսակների բազմազանության ամբողջությունն է, որը կարող է օգտագործվել գյուղատնտեսական տարբեր նպատակներով:

Ագրոկենսաբազմազանությունն իր մեջ ներառում է բուսական և կենդանական գենետիկական պաշարներ: Բուսական պաշարներն աշխարհագրական որոշակի տարածքում առկա բուսատեսակների և համակեցությունների օգտագործման ենթակա քանակությունն է:

Ըստ նշանակության լինում են՝

 բնապահպանական

 գեղազարդիչ

 արդյունագործական

 գիտական

 մշակութային:

Ըստ օգտագործման նշանակության լինում են՝ բնափայտային, ուտելի և համեմունքներ, վայրի պտղատուներ, դեղատուներ, վիտամինատուներ, յուղատուներ, աղանյութատուներ, ներկատուներ և այլն:

Հայաստանի բարենպաստ կլիմայական պայմանները նպաստել են հանրապետության լադշաֆտների և նրա կենսաբաղադրիչների մեծ և հարուստ բազմազանության և ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանում, ներկայումս, 30.000քառ.կմ տարածքի վրա կան ավելի քան 3500 տեսակ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17.500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը ողնաշարավորներ են: Երկրի տնտեսության և մարդու բնակության միջավայրի հիմնական հիմքն է հանդիսանում ագրոկենսաբազմազանությունն ու նրա ռեսուրսները: Շատ մեծ նշանակություն ունեն անտառները, որոնք զբաղեցնում են հանրապետության տարածքի 10%-ը: Անտառները կարևոր դեր են խաղում կլիմայի, ջրային ու ջերմային ռեժիմների կարգավորման, ագրոէկոհամակարգերի կայունության պահպանման գործում:



Հայաստանի անտառները հարուստ են մարդկանց համար կենսական նշանակության բուսական ու կենդանական ռեսուրսներով՝ ուտելի վայրաճ պտղատու-հատապտղատու, մեղրատու, եթերայուղատու,

վիտամիններով հարուստ, դաբաղանյութեր պարունակող, խեժատու և այլ բույսերով, բազմաթիվ արժեքավոր որսատեսակներով:

Ագրոկենսաբազմազանությունը նաև գոյատևման միջոցների (սոցիալական տնտեսական) ստեղծման բաղադրիչ է, որը պարենի



անվտանգությանն է նպաստում, գյուղաբնակների եկամուտների ավելացմանը, ներկայացնում է՝ գյուղատնտեսության և առողջապահության կապը սննդի տեսակետից, ֆերմերների դերն էկոհամակարգերում և այլն: Ագրոկենսաբազմազանության պահպանությունն իրականացվում է *in situ* (բնական միջավայրում նաև *on farm*) և *ex situ* (բնական միջավայրից դուրս) պայմաններում:

Ֆերմերների կողմից գենոետուրսների կառավարումը սերմարտադրության և *on farm* պահպանության միջոցով, նպաստում են մոռացված սորտերի և քիչ օգտագործվող բազմազանության նաև լրացուցիչ շահույթների ապահովմանը:

Ագրոկենսաբազմազանությունը այնպիսի բնագավառներում է կարևորվում ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխությանն առավել հարմարվող գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը, գյուղէկոնոմիկան և գյուղքաղաքականությունը, ագրոնոմիան, բնապահպանությունը, հողագիտությունը և մելիորացիան, բուսաբուծությունը և էթնոբուսաբանությունը:

Ագրոկենսաբազմազանության հարստացման եղանակներից է ընտրասերումը: Ընտրասերումը նոր սորտերի բուծման մեթոդների համակարգ է, կախված՝ խնդրի դրվածքից և մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկություններից: Ամենահին մեթոդը, դա ընտրությունն է: Այժմ լրամշակվել է մեթոդների շարքը:

✚ Անալիտիկ սելեկցիայի մեթոդը արհեստական ընտրությամբ նոր



սորտերի ստեղծման գործընթաց է:

✚ Սինթետիկ սելեկցիայի մեթոդը սեռական հիբրիդացման օգնությամբ նոր սորտերի ստեղծման գործընթացն է:

✚ Հետերոզիսային հիբրիդների ստացման մեթոդ:

- ✚ Փորձարարական մուտագենեզի մեթոդ:
- ✚ Կենսատեխնոլոգիական մեթոդ:
- ✚ Գենային ինժեներիայի մեթոդներ:



Գյուղատնտեսական ոլորտում առաջնային կառուցվածքային միավոր է համարվում ագրոէկոհամակարգը: Ագրոէկոհամակարգերը մարդու կողմից փոխակերպված և կարգավորված են գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար: Հակառակ բնական էկոհամակարգերի, այստեղ կատարվում է մշակաբույսերի և ընտանի կենդանիների արհեստական ընտրություն: Տարբերում ենք ագրոէկոհամակարգերի հետևյալ տիպերը՝

- Ագրոլորտ, որը գլոբալ էկոհամակարգ է ներկայացնում, միավորում է այն ամբողջ տարածքը, որը մարդու գործունեությամբ վերափոխվել է:
- Ագրարային լանդշաֆտ, այն ձևավորվել է գյուղատնտեսական վերափոխման հետևանքով:

- Գյուղատնտեսական էկոլոգիական համակարգ կամ տնտեսական էկոհամակարգ:
- Ագրոկենսաերկրացենոզ, որը ներառում է դաշտերը, այգիները, բանջարանոցները, պաշտպանված գրուտը:
- Արոտային կենսաերկրացենոզ, որը ներառում է բնական արոտներն ու արհեստականորեն ստեղծված մարգագետինները:
- Ֆերմերային կենսաերկրացենոզ, որը ներառում է գոմերը, խոզանոցները, թռչնանոցները, անասնապահական համալիրները և այլն:

Հայաստանի Հանրապետության 10-րդ հոդվածի համաձայն,



պետության կողմից է երաշխավորվում շրջակա միջավայրի պահպանությունը, նրա վերարտադրությունն ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Չնայած նրան, որ ՀՀ կառավարության կողմից մշակվել և ընդունվել են մի շարք որոշումներ և ենթաօրենսդրական

ակտեր, դեռևս առկա են հիմնախնդիրներ, որոնք հստակ չեն կարգավորվում գործող օրենքներով՝

- ✚ Ֆերմերների իրավունքի հստակեցում
- ✚ Հատուկ պահպանվող տարածքներում ԲԳՌ մոնիտորինգի, կադաստրի վարման, մեխանիզմների իրականացման և մոնիտորինգի չափորոշիչների մշակում
- ✚ Սելեկցիոն սորտի հեղինակի խրախուսման մեխանիզմների մշակում
- ✚ Գենետիկական ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված շահույթի բաշխման կարգավորում
- ✚ ԲԳՌ-ի համար օտարածին տեսակների ներթափանցման համար պոտենցիալ վտանգ ներկայացնող հսկողության սահմանում

IN SITU, EX SITU, ON FARM
պահպանման խնդիրները և
առանձնահատկությունները Հայաստանում

In situ պահպանումը - Բույսերի գենետիկ ռեսուրսների in situ պահպանումը Հայաստանում իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ), որոնք ընդգրկում են ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի շուրջ 60%-ը: Հայաստանի ԲՀՊՏ-երի ցանկը կազմված է՝

- IUCN I կատեգորիային համապատասխանող երեք պետական արգելանոցներից՝ «Խոսրովի անտառ», «Շիկահող» և «Էրեբունի»
- IUCN II կատեգորիային համապատասխանող երկու ազգային պարկերից՝ «Սևան» և «Դիլիջան»

- IUCN III կատեգորիայի համապատասխանող 230 բնության հուշարձաններից
- IUCN IV կատեգորիայի՝ 25 պետական արգելավայրերից:

On-farm պահպանումը - Հայաստանում on-farm կառավարման ուղղությամբ իրականացվող աշխատանքները խիստ սահմանափակ են ագրոկենսաբազմազանության on-farm պահպանման վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկության պակասի պատճառով: Մշակաբույսերի տեղական հինավուրց սորտերի, ինչպես նաև քիչ տարածված և օգտագործվող մշակաբույսերի պահպանումը գյուղացիական տնտեսությունների պայմաններում հանդիսանում է կարևորագույն գործընթաց:

Ex situ պահպանությունը - Ագրոկենսաբազմազանության ex situ պահպանումը շատ կարևոր միջոց է պահպանման համար, հատկապես, երբ դրանք վտանգվում են բնական աղետների կամ մարդկային գործոնի ծայրահեղ գործողությունների արդյունքում:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինիթիատիվի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):